

# Վարչապետն այցելել է Կոշ համայնք: Նրան ուղեկցել է մարզպետ Սարգիս Սահակյանը

16.05.2014

Վարչապետ Յուրիկ Աբրահամյանը Առողջապահության և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարներ Արմեն Մուրադյանի և Արտեմ Ասատրյանի, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ուղեկցությամբ այցելել է Կոշ համայնք:

Կառավարության ղեկավարը նախ եղել է համայնքի «Արմենակ և Աննա Թադևոսյաններ» բժշկական կենտրոնում, որին կից իրականացվում է մշտական բժշկական վերահսկողություն՝ վերականգնողական ծառայություններ տրամադրելով հաշմանդամություն ունեցող երեխաներին: Յուրիկ Աբրահամյանը շրջել է կենտրոնով՝ ծանոթացել ստեղծված պայմաններին, նորագույն սարքավորումներին:

Կենտրոնը հագեցած է երեխաների ֆիզիկական ակտիվությանը նպաստող, տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված ֆիզիոթերապիայի և անձնական խնամքի համար անհրաժեշտ սարքավորումներով և դիդակտիկ նյութերով: Կենտրոնն ունի նաև գերժամանակակից ախտորոշման և ֆիզիոթերապիայի սարքավորումներ, ժամանակակից շտապօգնության մեքենա: Կառավարության ղեկավարը կարևորել է երկրում նման հաստատությունների առկայությունը և ողջունել կենտրոնի հիմնման գաղափարը: Յուրիկ Աբրահամյանը կենտրոնի ղեկավարներին կոչ է արել ներկայացնել պետության հետ համագործակցության ծրագիր՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ փոխգործակցությամբ իրականացնելու համար: Միաժամանակ, վարչապետը կարևորել է հաշմանդամների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Հաստատությունը, որի կառուցման համար ներդրվել է 4 մլն դոլար, հնարավորություն ունի միաժամանակ սպասարկել 50 երեխայի: Ցերեկային խնամքի կենտրոնում գտնվելու ընթացքում երեխաները ստանում են վերականգնողական (ֆիզիոթերապիա, ակվաթերապիա), լոգոպեդի, հոգեբանի ծառայություններ, 2-անգամյա սնունդ: Երեխաները հնարավորություն ունեն նաև հանգստանալ իրենց համար հարմարեցված ննջասենյակներում:

Այնուհետև վարչապետն այցելել է Կոշի հիմնանորոգված մանկապարտեզ, որը նախատեսված է 92 երեխայի համար: Մանկապարտեզը հիմնանորոգվել, կահավորվել և բարեկարգվել է գերմանաբնակ բարերար Ռազմիկ Թադևոսյանի տրամադրած միջոցներով:

Նշված աշխատանքների իրականացման համար ներդրվել է 160 մլն դրամ:

Վարչապետը շրջայց է կատարել նաև մանկապարտեզով՝ ծանոթացել նախադպրոցական տարիքի երեխաների համար ստեղծված պայմաններին:

Յուրիկ Աբրահամյանը շնորհակալություն է հայտնել բարերարներին և մանկապարտեզի հիմնանորոգման նախաձեռնողներին՝ երեխաների համար նման բարձրակարգ պայմաններ ստեղծելու համար: «Սա մեծ բարեգործություն է և ազգանպաստ աշխատանք», - ասել է վարչապետը և նշել, որ նման մանկապարտեզներ պետք է բոլոր համայնքներն ունենան, և կառավարությունն ամեն ինչ անելու է նրանց այդ գործում աջակցելու համար:

Կառավարության ղեկավարը գրուցել է նաև Կոշի բնակիչների հետ՝ ծանոթացել նրանց հուզող խնդիրներին, պատասխանել տարբեր հարցերի: «Կոշի բնակչությունը բավականին ակտիվ է և կարծես ըմբռնումով է մոտենում երկրում առկա խնդիրներին, ինչը շատ լավ է: Բոլորը պետք է հասկանան, որ դրանց լուծման համար ժամանակ է պետք: Մենք սկսել ենք այդ աշխատանքները և փորձելու ենք այցելություններով իշխանությունն ավելի մոտեցնել մեր ժողովրդին, ազգաբնակչությանը, համայնքներին: Փորձելու ենք ավելի մոտիկից ծանոթանալ առկա խնդիրներին և տալ համապատասխան լուծումներ», - նշել է Յուրիկ Աբրահամյանը: